ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի և ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՁ-ի (այսուհետ՝ ԱՁ) միջև կնքված ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ 23/5-1 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

ՀՀ ԿԵ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) 2023թ. կարիքների համար սեղանի համակարգիչների մատակարարման նպատակով՝ վարչապետի աշխատակազմի և ՀՐԱՆՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՁ-ի միջև 27.10.2022թ. կնքվել է N ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ 23/5-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 1 396 000,8 ՀՀ դրամ ընդանուր արժեքով, իսկ մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել ըստ պայմանագրի 25.12.2023 թ.:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանվել է նույն պայմանագրի N 2 հավելվածով:

Գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում հանդիսացող տեսչական մարմնի 26.12.2023թ. թիվ 01//2175-2023 գրությամբ ներկայացված հավաստմամբ՝ «Հրանտ Համբարձումյան ԱՁ-ին բազմիցս բանավոր և գրավոր ծանուցվել է մատակարարման և հետևանքների մասին, սակայն Հրանտ Համբարձումյան ԱՁ-ի կողմից մատակարարումը չի կատարվել:»:

Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 15 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՁ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և հիմք ընդունելով Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կոզմից ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու առաջարկը, վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 26.12.2023թ. կնքված N ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ 23/5-1 ապրանքի մատակարարման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** *կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և* ***մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը

չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Միաժամանակ հայտնում եմ, որ Հրանտ Համբարձումյան ԱՁ-ին ուղղված 27.12.2023թ. թիվ 17/17.4/45026-2023 գրություն-ծանուցմամբ, ինչպես նաև www.gnumner.am կայքում հրապարակված՝ ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-23/5 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարության հրապարակմամբ, վարչապետի աշխատակազմն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա են Հրանտ Համբարձումյան ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Հրանտ Համբարձումյան ԱՁ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ